

Արձանագրություն № 6 (306)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2018 թ-ի մայիսի 11-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 27 անդամներից 18-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

- 1. Ռուսաց լեզվի /բնագիտական ֆակ-ի/ ամբիոնի հաշվետվությունը:**
- 2. Սոցիարցման արդյունքների մասին:**
- 3. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանության մասին:**
- 4. Ֆակուլտետի ՌԻՄ և ՌԻԳԸ աշխատանքների մասին:**
- 5. Ընթացիկ հարցեր:**

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Բ.Ս.Խոջումյանի հաշվետվությունը:

Ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Բ.Ս.Խոջումյանը հաշվետվություն ներկայացրեց 2016-2017 ուս. տարվա ամբիոնի գործունեության վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնում մշակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի համար թեստեր, համապատասխանաբար B1 և B2 մակարդակի:

Ամբիոնի դոցենտ Լ.Ա.Տեր-Սարգսյանի կողմից պատրաստվել է ռուսաց լեզվի մագիստրատուրայում ուսուցման ծրագիր:

Պատրաստ է Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողների համար ձեռնարկը:

Ամբիոնը պատրաստել և մարտի 3-ին և 23-ին հաջողությամբ անցկացրել է աշակերտական օլիմպիադան:

Ամբիոնի դասախոսները աշխատում են տերմինաբանական բառարանների ստեղծման վրա հետևյալ մասնագիտություններով:

- Աշխարագրություն և երկրագիտություն
- Քիմիա, կենսաբանություն, դեղագործություն
- Ֆիզիկա, ռադիոֆիզիկա
- Տնտեսագիտություն, ակտուար մաթեմատիկա
- Մաթեմատիկա և ծրագրավորում:

Ամբիոնի 8 դասախոսներ շարունակում են որակավորման բարձրացումը:

Դասախոսների կողմից հրատարակվել է 15 գիտական աշխատանք:
Ամբիոնի վարիչի կողմից անցկացվել են դասալուսններ հետագա քննարկումով:
Դեկան Բալայանը հարց հնչեցրեց, կարող են ուսանողները հանձնել B1 մակարդակի քննություն, որին Խոջումյանը տվեց դրական պատասխան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ Սոցիալական արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկանի տեղակալ Դ.Գազարովան:

Առաջին անգամ հարցումը անցկացվել է էլեկտրոնային տարբերակով: Մասնակցել են 97 ուսանող 159-ից առկա ուսուցման և 37 հեռակա համակարգի ուսանողներից 19-ը, ինչը կազմում է 61 և 51 տոկոս:

Կուրսղեկների աշխատանքը 1-ին կուրսում գնահատվել է գերազանց, 9-ը մագիստրոսներից 2-ը գնահատել են դրական, մնացածը բացասական:

Դեկանատի աշխատանքի միջին գնահատականն է 4,75:

Ընդհանուր առմամբ նկարագիրը դրական է, բացակայում են կաշառակերության և լրացուցիչ պարապմունքների դրդման օրինակները: Դրական պահ է ուսանողների անձնական կարծիք արտահայտելու տենդենցը:

Բողոքները վերաբերվում են նյութերի սակավությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ.Բալայանը:

Մայիսի 21-ից սկսվում է ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը: Նոր կանոնակարգով ավարտական աշխատանքների ընդիմախոսը ներքին է, մագիստրոսականինը՝ արտաքին: Բոլոր աշխատանքները անցել են ***Հակագրագողություն*** ծրագրով, 5 աշխատանք վերադարձվել էին ձևափոխման:

4. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ՈԻԽ և ՈԻԳԸ աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ՈԻԽ նախագահ Վարսենիկ Օհանյանը և ՈԻԳԸ նախագահ Կարպիս Անուսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ընդհանուր առմամբ մթնոլորտը ֆակուլտետում դրական է: Ուսանողների պահանջները վերաբերվում են նոր ժամանակակից մեթոդների ներդրմանը, որոշակի դասընթացները պրակտիկ ժամերը ավելացնելուն, դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները տրամադրելը, ավելի շատ

ինքնուրույն աշխատանք կատարելը: ՈԻԳԸ խնդրանքն էր ուսանողական հոդվածները խմբագրելու խորհուրդ ստեղծել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն և մոտակա օրերին հանդիպում կազմակերպել ուսանողների ավելի լայն շրջանակների հետ:

5. ԼՍԵՑԻՆ Ընթացիկ հարցեր:

- Պատրաստել մասնագիտական դասընթացներ որակի բարձրացման համար,
- 2019-ի գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին իրենց մասնակցությունը հաստատել է Россотрудничество –ն :

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ